ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱԱՀ

ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ՆՈՒԻՐՈՒՄ, ՈՐ ԿՈՉՈՒՄ ԵՆՔ «ԷՋՄԻԱԾԻՆ»

«Հայ ժողովուրդը տասնեակ դարերով ապրել է շնորհիւ իր Եկեղեցու եւ նրա մեծ ղեկավարների ներշնչած կենսատու ուժի»[1]։

Հայ մամուլ կոչուող խայտաբղետ ընտանիքի աւագագոյններից ու պատկառելի ճանապարհ անցած հանդէսի յոբելեանն ենք նշում ու բնականաբար առաջին գործը, որ անում ենք, յետահայեաց ձգելն է։ Վերաբացումից յետոյ հէնց առաջին համարն սկսւում է Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր տեղակալ Գէորգ արք. Զորէքչեանի խօսքով, որի վերնագիրը՝ «Հայ Եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդէպ», մաթեմատիկական բանաձեւի ճշգրտութեամբ տալիս է մեր հոգեւոր ամրակուռ կառոյցի սահմանում-բնութագիրը։ Սրանից յետոյ, այլեւս կարծես ոչինչ չկայ յաւելելու, ճիշտ ինչպէս ոչինչ չես լրացնի Տէրունական աղօթքի մէջ, Նիւտօնի մեխանիկայի օրէնքներում։ Ժողովրդի հանդէպ «պարտք», որ շուրջ 2000 տարի լիաբուռ վերադարձնում է իր զաւակներին՝ հոգեւոր դաստիարակութեան, կրթութեան-գիտութեան լոյսի, արուեստների ու արհեստների, ընկերային բազում մարդասիրական ծրագրերի տեսքով։

Ի սկզբանէ անհնար է եղել զատել հայրենիք — Հայ Առաքելական Եկեղեցի — հայ ժողովուրդ փոխլրացնող, մէկը միւսով իմաստաւորուող եռամիասնութիւնը։ Հայրենիքում թէ ճակատագրի բերումով դրա սահմաններից դուրս ու հեռու, իսկ հեռւում առաւել եւս արթուն հետեւողականութեամբ՝ Հայ Եկեղեցին ծնողի գուրգուրանքով, ծնողի ներողամտութեամբ, ծով համբերութեամբ տէր է կանգնել իր զաւակներին, իր հօտին։ Այդպէս եղել է, է ու կլինի միշտ։

Պարբերականը վերստեղծելիս ազգընտիր տեղապահ Գերապատիւ Գէորգ արքեպիսկոպոսը համոզուած էր, որ այն հայրենիքի, աստուածաէջ Մայր Աթոռի շուրջն է հաւաքելու, համախմբելու աշխարհասփիւռ

[1] *«Վերածնունդ», Իրան, 1945, թ. 50։*

զաւակներին, ի մի է բերելու ստեղծագործ ուժերն ու արարելու կամքը, հնարաւորութիւնները[2]։ Իսկ բռունցքուելու անհրաժեշտութիւն կար, աշխարհը պարուրուած էր ամեհի-կործանիչ ուժի ճիրաններում։ Օրհասի պահին միանգամայն երկրորդական էին դարձել մարտնչող անաստուածութեան հետեւանքով տածած վիրաւորանքները, հալածանքը, ահաբեկչութիւնը, որ կրել էին հայ հոգեւորականները։ Հայրենիքը վտանգի մէջ էր, եւ «Հայոց Եկեղեցին իր ժողովրդի նկատմամբ ունեցած սիրոյ եւ հոգատար վերաբերմունքի ցայտուն օրինակներ ցուցաբերեց ներկայ հայրենական մեծ պատերազմում»[3]։ Մէկ տարի անց՝ յաղթանակի օրերին, կփաստէին. ամենուր լսել-անսացել են հոգեւորականների կոչ-յորդորներին։ Ողջ հայութիւնը, բոլորը միասին մօտեցրել են յաղթանակը[4]...

Արդէն յիշատակուած «Վերածնունդ» պարբերականում կարդում ենք. «Հայ Եկեղեցին կամ աւելի ճիշտ է ասել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայութեան համար եղել է ամենամեծ խորհրդանիշը, որի սփռած լոյսն ու յոյսը պահել, պահպանել, ուժ ու կորով են տուել հայ ժողովրդին բոլոր տառապալից արհաւիրքների, դժբախտութիւնների, աղէտների դէմ... Հայ ժողովուրդը դարերի ընթացքում պահել է իր ինքնութիւնը շնորհիւ իր լեզուի եւ եկեղեցու»[5]։ Առաջնորդողի հեղինակի համոզմամբ Հայ Առաքելական Եկեղեցին տարբերւում է քրիստոնէական մնացած բոլոր Եկեղեցիներից։ Այս լոյսն է, որ կենսունակ ու ապրեցնող է դարձրել ժողովրդին՝ հակառակ աննպաստ պայմանների։ Յատկապէս հաւատքի ուժն է, որ օգնել է չվհատուել, չերկնչել ու քաջաբար յաղթահարել ամենաանհաւանական դժուարութիւնները։

Մայր Աթոռի պարբերականների հիմնադրման—փակման—վերաբացման հանգամանքներն ու դրուագները տարբեր առիթներով արժանացել են հայ եւ օտար հետազօտողների ուշադրութեանը։ Դրանցում, փաստօրէն, դիտարկուել են ոչ թէ պարզապէս մի առանձին պարբերականի ստեղծումն ու կայացումը, այլ նաեւ Եկեղեցի—պետութիւն, Եկեղեցի—մտաւորականութիւն, Եկեղեցի—ազգ յարաբերութիւնները։ Դիւանական վաւերագրերի հրապարակումներից, օրինակ, կարելի է տեսնել, թէ ինչպէս էին պետական պաշտօնեաները հայ հոգեւորականութեանը պարտադրում խորհրդային

---

[2] *Այստեղ պէտք է նկատել, որ պարբերականի առաջին իսկ համարներից սկսած, հոգեւոր ասպարէզի երեւելի մշակներից բացի, ամսագրին թղթակցում էին Աւետիք Իսահակեանն ու Ստեփանոս Մալխասեանցը, Գարեգին Լեւոնեանն ու Հրաչեայ Աճառեանը եւ այլք։*

[3] *«Էջմիածին», 1944, Ա., էջ 2։*

[4] *«Էջմիածին», 1945, Ե., էջ 3։*

[5] *«Վերածնունդ», անդ։*

ուղղագրութիւնը, իսկ վերջիններս ամեն գնով պահում էին մեսրոպեան-աւանդականը։ Դեռեւս 1924 թ. նորաստեղծ Գերագոյն հոգեւոր խորհրդի նիստում քննարկւում էր կրօնական-ազգային պարբերական ունենալու հարցը, եւ ընդգծւում էր ամսագիրը «աւանդական ուղղագրութեամբ հրատարակելու համար միջոցներ ձեռնարկելու» *կարեւորութիւնը, որովհետեւ* «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին չէր ընդունում ՀՍԽՀ ժողկոմխորհի 1922 թ. մարտի 4-ի դեկրետով կատարուած ուղղագրական փոփոխութիւնը»[6]։

Ուսումնասիրողները նաեւ կարծիքներ են հնչեցրել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պարբերականների խաղացած դերի ու նշանակութեան վերաբերեալ։ Հայ արուեստի, պատմութեան, գրականութեան, ընդհանրապէս հայագիտութեան ասպարէզում Առաքելական Եկեղեցու ամսագրերի նիւթերը կարեւոր ներդրում են ազգային գիտութեան մէջ։ Իբրեւ ամսագրի վերաբերեալ կատարելապէս անկողմնակալ դիրքորոշում՝ կարելի է յիշել 2012-ին Կենտրոնական հետախուզական վարչութեան գաղտնազերծած՝ «U.S.S.R. National Intelligence Survey» *(ապրիլ, 1974) զեկոյցը*[7]*, որ համակողմանի ուսումնասիրութիւն է ԽՍՀՄ-ի մասին։ Կառավարում եւ քաղաքականութիւն, Տնտեսութիւն, Հաղորդակցութիւն եւ կապի միջոցներ, Զինուած ուժեր եւ այլ բաժիններից բացի՝ առանձին խորագիր է Կրօնը։ Այստեղ կարճառօտ, բայց եւ ճշգրիտ տուեալներ են զետեղուած ԽՍՀՄ տարածքի կրօնական կառոյցների վերաբերեալ, յիշուած են կարեւորագոյն փաստերը (օրինակ՝ գրուած է, որ պետական անկախութեան հետ Վրաց Եկեղեցին կորցրել է նաեւ հոգեւոր անկախութիւնը եւ միայն 1917-ին վերականգնել ինքնագլուխ (αὐτοκεφαλία) դիրքը*[8]*)։ Հայ Առաքելական Եկեղեցու կապակցութեամբ հեղինակները նշում են, որ հնագոյն քրիստոնեայ Եկեղեցին է։ Քսան եւ եօթ թեմերից միայն հինգն է Խորհրդային տարածքում, եւ Ֆրանսիայից, ԱՄՆ Նահանգներից, Ինդոնեզիայից եւ Իրանից բացի՝ հետեւորդների թիւը մեծ է նաեւ Վրացական, Ադրբեջանական եւ Ռուսաստանի Դաշնային Հանրապետութիւններում։ Յատուկ անդրադարձ կայ Գէորգեան հոգեւոր ճեմարանին եւ «Էջմիածին» ամսագրին, «որ տարածւում է ոչ միայն հանրապետութիւնում, այլեւ երկրի սահմաններից դուրս»*[9]։

---

[6] *«Էջմիածին», 2020, Ա., էջ 80։*

[7] *Ուշագրաւ է յատկապէս՝* «The General Survey is prepared for the NIS by the Central Intelligence Agency and the Defense Intelligence Agency under the general direction of the NIS Committee. It is coordinated, edited, published, and disseminated by the Central Intelligence Agency» *գրառումը. տե՛ս էջ 2։*

[8] *Անդ, էջ 55։*

[9] *Անդ, էջ 58։*

Համեմատութեան համար պէտք է յիշել Ռուս Ուղղափառ Եկեղեցու մասին գրառումը, թէ՝ «տպագրում է «Журнал Московской Патриархии» *վերտառութեամբ մի պարբերական, բայց թէ ինչպէս է այն տարածւում, յայտնի չէ»[10]։ Իսկ Վրաց Եկեղեցու հրատարակութիւնները սահմանափակւում են տարին մէկ լոյս տեսնող Տօնացոյցի տպագրութեամբ։ Չի շրջանցուել նաեւ այն փաստը, որ չնայած Վրաց Եկեղեցին յայտարարել է հոգեւոր ճեմարան ունենալու մասին, սակայն «դա հաստատող որեւէ վկայութիւն չգտնուեց»[11]։ Բնական է՝ դիտարկուող հրատարակութիւնը ո՛չ գնահատելու, ո՛չ արժեւորելու նպատակ չի հետապնդում. զգացմունքայնութիւնն ամբողջովին բացառող հետախուզական լեզուով պարզապէս արձանագրւում է «Էջմիածին» ամսագրի գրաւած դիրքը, նուաճում, որի համար բազում սերունդներ մեծ ջանքեր են ներդրել։ Իսկ նպատակը միակն էր՝ «Հայ Եկեղեցու պարտքը իր ժողովրդի հանդէպ», ծառայել հայրենիքին, երկրին, ազգայինին, սրբօրէն պահել հայրենի աւանդը, հայոց կենսունակութիւնը։ Իսկ երկիրն ու ժողովուրդը կենսունակ են ամուր, քրիստոնէական արժէքների վրայ խարսխուած երջանիկ ընտանիքների գոյութեան շնորհիւ։ Այս մասնիկներից, նրբերանգներից է, որ ամբողջանում, համապարփակ ու առինքնող է դառնում խճապատկերը։ «Միմեանց ապաւինելով ու սատարելով՝ ի զօրու ենք շէնացնել մեր կեանքը հայրենիքում ու սփիւռքում, պաշտպանել մեր սահմանները, ազգային արդար իրաւունքները, հզօրացնել Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը։ Հայրենիքի արժանաւոր զաւակ դաստիարակելու, պետութեան քաղաքացի կրթելու առաջին հանգրուանը ընտանիքն է։ Ընտանիքում է կերտւում ազգի ապագան, դրւում հիմերը հզօր պետութեան։ Ընտանիքի գորովաշատ միջավայրում են մանուկ հոգիներում պտղաբերում Աստուծոյ խօսքի սերմանուած հունդերը, սնուցւում հոգեւոր-բարոյական արժէքները, բարին ընտրելու աներկիւղ ոգին։ Ընտանիքում մատուցուած օրինակով կրթւում են միմեանց հանդէպ սէրը, վստահութիւնը եւ հոգատարութիւնը։ Արդ, նախանձախնդիր մնանք նուիրականութեանն ու ամրութեանը ընտանիքի։ Անխաթար պահպանենք աստուածահաստատ ընտանիք հասկացութիւնը, նրա սրբութիւնը, ազգային աւանդոյթները, խնամենք ու բարձրացնենք մեր հոգեւոր ու ազգային կեանքը եւ մնանք մշտապէս Տիրոջ որդեգրութեան շնորհի մէջ՝ որպէս հաւատաւոր մէկ ընտանիք, որպէս Աստուծոյ սեփական ժողովուրդ»,— կարդում ենք*

[10] *Անդ, էջ 54։*
[11] *Անդ, էջ 55։*

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ.-ի պատգամում[12]։ Պատգամ, որ մեզ առաջնորդելու է միշտ։

Քրիստոնէական ընտանիքի աւանդոյթների շնորհիւ է, որ սերնդէսերունդ պահել ու փոխանցել ենք այն, ինչ կարող ենք ամփոփ կոչել պատմական յիշողութիւն։ Այն, ինչ կարող ենք համարել ազգի անշփոթելի նկարագիր, ինքնութիւն կամ գուցէ անառիկ ամրոց, անխոցելի վահան...

Այսօր եւս, ինչպէս հազար, ինչպէս երկու հազար տարի առաջ մենք ապաւինում ենք մեր Եկեղեցու եւ նրա մեծ ղեկավարների ներշնչած կենսատու ուժին, Մայր Աթոռի կենարար-կենսահաստատ-արարող լոյսին, որի շողերից մէկն էլ «Էջմիածին» հանդէսն է՝ կրօնագիտական, հայագիտութեան հիմնահարցերի խոր ու համակողմանի վերլուծութիւններով, թեմական կեանքի նորութիւնների մասին հաղորդումներով, աստուածաշնչեան մարգարիտների վերլուծութիւն-մեկնութիւններով, գրախօսութիւններով։ Անգամ պարբերականի մատենագիտութիւնը հպանցիկ-մակերեսօրէն թերթելիս իւրաքանչիւր տողի արանքից մեր առջեւ յառնում է տասնեակ խմբագիրների ու աշխատակիցների՝ սիրով ու նուիրումով լեցուն աշխատանքի արդիւնք-վկայութիւնը, աշխատանք ու նուիրում, որ կոչում ենք «Էջմիածին»։

РЕЗЮМЕ

В дискурсе обсуждается роль теологического и арменологического журнала «Эчмиадзин» и сравнивается с аналогичными публикациями других религиозных институтов СССР (таких как Русская Православная и Грузинская Церкви). В частности, упоминается обозрение ЦРУ от апреля 1974 года, по которому видно, что периодическое издание Св. Эчмиадзина не имеет аналогов в СССР.

SUMMARY

The discourse considers the role of “Etchmiadzin” theological and Armenological magazine and compares it with similar publications by other religious institutions (such as the Russian Orthodox Church, the Georgian Church) in the USSR. In particular, the CIA review of April 1974 is mentioned, which shows that the periodical of Holy Etchmiadzin had no analogues in the USSR.

---

[12] *«Էջմիածին», 2019, Ա.։*